

ու վերցնել: Այդ բանում նրան պիտի
օգնէ Մարգարայից Սամադ-խանը
և Մարադարի Բանիմ-խանը:
Վարչակազմի եկողները, ուր ներ-
կայումս բանակ է դրել իր զորքերով
էյս-ուլ-Իօվին, վկայում են, որ նրա
զինակիր զորքերը թիւը հասնում է
7000 ի, որոնք շարունակ նոր ոյժեր
են ստանում Թէհրանից: («Ե. Բ.»)

Թարիք, 26 դեկտ. (մինչև Զուլֆ պոստով)
Սաթթար-խանը հրամայեց գրաւել
շահի, նրա կնոջ և հարուստ Սպաշ-
ուլ-Մուլլիի այն կալուածքները, ու-
րոնք գտնվում են Արաքսափնիսում:
((«Հ. Գ.»))

Ուրմիա, 26 դեկտ. (մինչև Զուլֆ պոստով)
Սալամատին օգնութեան եկած ուրմի-
ցի յեղափոխականները դեկտ. 17-ին
վերադարձան Ուրմիա, ուր նրանց հան-
դիսաւոր ընդունելութիւնացոյց տուին:
Սոյի և Սալամատի ազգաբնակի-
ւթիւնը դժգոհ է յեղափոխականների
գործունէութիւնից, որոնք ապրում
են տեղական ազգաբնակիւթեան հաշ-
ւով:

Ոչ մի տարբերութիւն նախկին նա-
հանգապետների և ֆէդայիների այժ-
մեան արքաների կառավարու-
թեան ձևի մէջ չը կայ:

Ուրմիայի մէջ յանգիստ է, բայց
ճանապարհները վրա կողպուտները
շարունակվում են: Տեղական անջն-
մանը և նահանգապետը քննում են,
թէ ինչպիսի միջոցներ ցանկալի է
ձեռք առնել ջեղաբերի դէմ, որոնց կո-
ղպուտները, ընդհանուր կարծիքով,
զարմանք աւելի մեծ չափեր են ըն-
դունելու: («Հ. Գ.»)

Թէհրան, 26 դեկտեմբերի
Փարման-Փարման ընդունեց Սպահ-
անի նահանգապետի պաշտօնը և մօտ
օրերս այնտեղ կուղարկել իր փոխ-նա-
հանգապետին:

Ռուսական և անգլիական միասիա-
նները խորհուրդ տուին Մամաւ-
Սաթթարին չաջակցել անորոշ դրու-
թեան շահի նահանգապետին ընդունե-
լու մերժումով:

Թէհրանում մի քանի կանայք փոր-
ձեցին շուկաները փակել տալ: Փա-
նդարները դրա առաջն առան:

(«Հ. Գ.»)

Պետերբուրգ է վերադարձել Թէհ-
րանից պարսկական կողմից ինա-
տուրկաօրերից մէկը, ուսումնական ծա-
ռայութեան կապիտան Ուշակովը:

Նրա գալը կապ ունի գնդապետ
Լեախովի պարսկական ծառայութիւնը
թողնելու հարցի հետ:

Հազիւ էր վճռվել հեռացնել գնդա-
պետ Լեախովին, երբ կառավարչական
շրջաններում իսկոյն հարց է յարուց-
վում նրա փոխարինողի մասին:

Զինուորական մինիստրը մասնացոյց
է արել կապիտան Ուշակովին՝ իբրև
յարմար փոխարինողի վրա Սակայն
դեռ պահանջարկի տուած տեղեկու-
թիւնները նրա գործունէութեան մա-
սին, որպէս Լեախովի օգնականի,
այնքան էին անբաւարար, որ կապի-
տան Ուշակովի թեկնածութիւնը
մերժվեց:

Այժմ, երբ Հարովիգին յետ կանչե-
լու հարցը վճռված է արդէն, Պետեր-
բուրգ է կանչվել անձամբ զեկուցում
տալու Պարսկաստանում կատարող
անցքերի համար կապիտան Ուշակովը:
Դեկտեմբերի 17-ին վերջինս ներ-
կայացել է մինիստրութեանը և տուել
հարկաւոր զեկուցումը: Նրա արտա-
յայտած հայեացքները ապագայում
ունենիլը քաղաքականութեան մասին
ամենանպաստաւոր գնահատութիւն
են ստացել:

ԹԻԻՐԻՔԻ ԱՅԻ ՇՈՒՐԻՔԸ

Ընդհան, 25 դեկտեմբերի
Կ. Պոլիս, հարդուրում են լրագրի-
ւորները, որ Անձեղ-Րիզան Նոր Տարվայ
առիթով իրան այցելութիւն տուող
դեսպաններից մի քանիսին յայտնել
է, որ Թիւրքիայի համաձայնութիւնը
ունենակիսի փոխարէն զբաղական
վարձատրութիւն ստանալու՝ կը հակա-
սէր ազգային արժանապատուութեանը:
Բ. Դուռը եթէ համաձայնութիւն
տայ այդ բանին, այն ժամանակ երե-
տասարդ-թիւրքերը հանդէս կը գան
շեքմ բողոքով: («ԿԵ.»)

Կ. Պոլիս, 25 դեկտեմբերի
Կահիրէից հաղորդում են, որ Արա-
բիայում ապստամբութիւն է ծագել:
Բէզուինները յարձակվել են Մէկ-
կալի վրա, կոտորել են պետական
պաշտօնականներին, սպանել պահապա-
ններին:
Բազմաթիւ վիրաւորվածներ կան:
Շուկան և կրպակները փակված են:
«ԿԵ.»

Կ. Պոլիս, 26 դեկտեմբերի
Բէշլուքի ֆրանսիական հիւանդա-
նոցում մինչև օրս եղել են ժամատախ-
տի հինգ դէպքեր:
Ձէտտայում եղել է ժամատախտի
նոր հիւանդութիւն: («Հ. Գ.»)

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 15 դեկտեմբերի
Սորհրդարանը զանազան գոյնի գուրս
կուտայ. մէկ երկու երեսփոխաններ, որոնց
մասին զանազաններ եկած էին թիւրքերու
կողմէ, թէ աստիք իրենց գտնուած տեղե-
րուն մէջ կեդրեղներ եղած էին (խալաֆե-
րու), արտաքուսեցան պարլամենտէն: Իսկ
Շարին-Քարահիսարի թիւրք երեսփոխանը,
մի ինչ-որ Մուստաֆա, արդէն ամբաստա-
նուած հայոց առաջնորդի կողմէ, թէ այդ
Մուստաֆան եղած է հայերու մեծ ջարդի
կազմակերպիչը, պաշտպանութիւն գտա-
լայտնապէս իր կօնակից երեսփոխաննե-
րէն: Սորհրդարանին մէջ մեր պաշտօնա-
կան ամբաստանիչն էր Գր. Զոհրապ, այն
բուռն լեզուով, որ արգարութեան լեզուն է:
Վճիռը պիտի կայանար քուէով, և որով-
հետեւ թիւրքերը թիւրքու ջախջախիչ ա-
ռուելութիւնը ունին, Մուստաֆան, արիւ-
նաթախա ճիւղը, պիտի նստի պարլա-
մենտի աթոռի վրայ ու իր ձայնն ու ձեռ-
քը պիտի դնէ երկրին ճակատագրական ու-
րոշումներուն մէջ:

Սորհրդարանին առնեապետները քուէաւ-
րուեցան ու հաստատուեցան կայսերական
իրաւէտով: Անձեղ Րիզա, առաջին ատենա-
պետը, պիտի վարէ այսուհետեւ նիստերը:
Ասանկը ինչպէս պիտի վարել, ինչ ըն-
թացք պիտի ունենայ: Անձեղ Րիզա, որ
տարիներով Ներսիսի մէջ ապրած ու դրած
է սահմանադրութեան համար, կը պատկանի
իր գաղափարներով պահպանողական-ազա-
տական կուսակցութեան, այն մասին, որ
շատ թիւրք է, այսինքն ամեն բանէ վեր
թիւրքերը, ամեն բան թիւրքերուն. ու եթէ
քիչ մը բան աւելնայ, ան ալ՝ բրիտանիա-
նիստն, ոչ թէ իբրև իրաւունք, այլ իբրև
շնորհ: Առած է որ կըստի՝ զգինքն զբը-
ձած քաջախիւ բարկ կըլլայ: Երեսփոխու-
թեան դարձող պահպանողականը աւելի
թիւր, աւելի կ՛ուզէ կը հանդիսանայ:

Տեսնենք. իր շնորհակալութեան ճառովը
բաւական խոշոր կը ջարդէ: Համոզուած է,
թէ ինչ որ կը գործէ խորհրդարանը, ինչ որ
կը խօսուի խորհրդարանի մէջ, քաղաքա-
կերթ աշխարհին առջև է քանի մը ժամ
հոգը. լաւ ըմբռնած է, թէ Ներսիսն աշ-
քեր յառած Թիւրքիոյ վրայ՝ կը քննէ, կը
դատէ իրենց խօսքերն ու գործերը:

Այսօր թիւրքերու մէջ գրուած է, թէ սպառ-
նական նամակ գրուած է մեր երեսփոխա-
նի Զոհրապին, յայտարարելով որ եթէ պար-
լամենտի նիստերուն երթայ, կենանք
վստահ պիտի գտնէ: Հաւանական է աւս,
որովհետեւ Զոհրապը դիւտէ խօսիլ ու լաւ
խօսիլ. արեւաբար Մուստաֆայի դէմ միակ
խօսողն ան էր, — արեւ մը, որ, ինչպէս երևի,
հաճոյ կ'ուզէ չէր թիւրք երեսփոխաններուն:
Ուստի այդ խօսող բերանը լոցեցնելու հա-
մար լաւ միջոցը խորհուած է — կենանք
պառնալիք:

Կատակերգութեան առաջին արարուածն
է ատ. տեսնենք ինչ լուծում պիտի գտնէ:
Զոհրապը ընտրութեան դէմ լարուած մե-
քենայութիւնները յայտնի ապացոյցներ էին
կանխաւ, թէ թիւրք երեսփոխանութիւնը
չպիտի ուզէր իր մէջը ունենալ Զոհրապի
պէս կարող և կուտող անձամբ մը: Բայց
որովհետեւ մեր մէջ ըմբռնուեցաւ այդ կէ-
տը, տեղի տուին ընտրութեանը առջև. և
այսօր, կատակերգութեան առաջին արա-
րուածութեան մէջ, գուրս պոռթկացուցին իրենց
գոյնը:

Յեմ կարծիք, որ պարտաբար, ազգ. ու-
րի պաշտօնական մարմինները անտարբեր
գտնուին մեր արժանաւոր երեսփոխանին
եղած այդ սպառնալիքներուն մասին:

Այսպիսի վախերն առկա չենք ընկիւր:
հաւանական է, որ թիւրք տարբեր, դարե-
բով տիրող ու գաղտնի, ուրիշ անպատե-
հուութեանց ալ տեղի տայ: Մեր պարտաւար-
նութիւնն է, հայրենիքի սերունդ համար,
չըրհայեացք ըլլալ, օրինակը տալ, իրաւա-
ցին խօսիլ:

Բիւրդերու հետ մշակուած յարաբերու-
թիւնները հեռագիտել մտերմական հանգա-
մանքներ կը ստանան: Շարքի մըն է, որ
սկսաւ հրատարակուիլ «Քրիտիստոս» ամսնով
թիւրթ մը, շարքի թիւրք անգամ, թիւրք
բերէն և քիւրդերէն լեզուներով: Սրբա-
գրողներն են Պետերխան-բէկ հարապա-
նները, որոնց մէջ կան օրէնսգիտներ, դա-
դէտներ, լեզուագիտներ: Իրենց մեզի հետ
կապած յարաբերութիւնները կրնան լաւ
ազդեցութիւն յառնել բերել քիւրդ ցեղերու
վրայ, զիստարթաւր վանի, Բաղէշի և Մի-
ջաքաթի քիւրդ աշխրեթներու վրայ:

Այսպէս է մեր երկրին գործերու և միտ-
քերու վիճակը. այսօր մէկ կողմ, հզուց
ուրիշ կողմ. գուցէ յաջորդ թղթակցութեա-
նով աւելի թիւրքերու կողմը հակմը իրա-
ւացի պատճառներով:

Ինչ ալ ըլլայ, սահմանադրութիւնը, իր
պարլամենտով ու ծերակայովը, շրջանի
մէջ մուտ գտած է այսօր, երկրի ալ աչքերը
յառած՝ կը դիտէ անոր ուղղութիւնը:

Կայսրի գահաձախն ուղեբձները պատ-
րաստուած են — խորհրդարանական ձևա-

կանութիւններ, որոնք քիչ մը կը յիշեցնեն
հին լեգիսլատի օրով մատուցուած շողորդութիւնները:

Դասաժողով իշխանի՝ Րէշադի անձին
դէմ պալատի հրացանակիրներու կողմէ
գիշեր ատեն լարուած դաւադրութեան քըն-
նութիւնները կը շարունակուին: Սալափը
առ այժմ յայտնի է, թէ քանի որ պալատին
հրացանակիրները դաւին մէջ են, հասկածը
ընկալուածքաւ կը պրուի դէպի Ներսի:

Կը վախցուի որ ծուղակին մէջ ձուլուին
սուլիան Աղիդի որդիներն ալ զիստարթա-
բար Նուսուֆ-Իզզէդդինը:

Սովետական նպաստ հասցնելու ճիգերը
հետզհետէ աւելի զօրացած են. անկեղծ
կեդրով կը կրկնեն, որ Պոլիս հայութիւնը,
ինքն ալ վարձակուած արդէն և ուժաս-
պատ հին ժաղրութեան անորոշմ հարստա-
հարութիւններէն, կրցածն աւելին է որ
գործ կը դնէ իր սրբազան պատրիարքին
հետ. կուտան ամենքն ալ, ունեցողը, չու-
նեցողը:

Սուլթան Աղիդի երկու որդիներն ալ
մասնակցած են սովետական նպաստին.
Իզզէդդին իշխանը դրած է, երկրորդ ան-
գամ ըլլալով, ութը օտ. ոսկի, իսկ կրտսեր
հղաբար, Մէշիքէֆէդի, հայու մը ձեռքով
պատրիարքին հասցուցած է 30 օտ. ոսկի
(250 ր.) Այս վերջինը լուսամիտ իշխանա-
դուն մըն է, կը խօսի Ֆրանսիայէն ու դե-
մաներէն. ինքն եղած է ցայսօր իր դւա-
կին ուսուցիչը, որովհետեւ ուրիշ միջոց
չկար: Որոշած է յառաջիկայ տարի Ներսի-
սա լրելել զանի:

Քանի մը օր առաջ մեծ խնձոր մը ար-
քուեցաւ ի պատիւ պր. և տիկին Քիլիսի:
Սեղանի մասնակից գտնուած են օտ. պար-
լամենտի հայ անդամները, պատուաւոր վա-
ճառականներ, քաղաքական կուսակցու-
թեանց ներկայացուցիչներ, կաթողիկէ և բո-
ղոքական հայ հասարակութեան նշանաւոր
անհատներ, մամուլի ներկայացուցիչներ,
(«Stamboul») Ֆրանսիայէն թիւրքի խմբա-
դարպետը իր տիկնոջ հետ:

Պարոն Քիլիսա պարիզեան Ֆրանսացի
այն աղին հողին է, որ տարիներով իր
գրէին ու թիւրք նուիրած էր արեւելեան
դատին, մասնաւորապէս հայ ժողովուրդին.
Թիւրքիոյ մէջ կրած չարչարանքներուն:
Պոլսի մեծ ջարդէն առաջ, Կեդրոնական
վարժարանի մէջ Ֆրանսիայէն լեզուի ու-
սուցիչ էր: Այդ արեւելի դէպքերէն հոգն է
որ դարձած էր Պարիզ և ամբողջ ատաներ-
կու տարի պարապած հայութիւնով:

Խնձորը պատճառ տուած է մեծ գաղա-
փարներ և մտածումներ արտայայտելու. և
հաւանական կը թուի որ միացած խոշոր
զինքը քաղաքի երեքը հատուածեալ հայ
տարբերու մէջ:

Աւելորդ չեմ համարել ըսելու, թէ սահ-
մանադրութիւնն ի վեր կաթողիկէ հայ հա-
սարակութիւնը, բոլորովին ուշադիր այն
մեծ դէպքերու որոնք երկրին մէջ կանցնին,
ուշադիր չէ ինքն իրով զբաղելու. ու այս-
պէս շարունակուելով, կարծեմ, բարենշան
օր մըն ալ, երբեք փոթ չպիտի ընէ դիտ-
նալ, թէ ուր է իր տեղը երկրի թագաւո-
րութեան մէջ, և թէ երբորդութեան մէջ
հողին որդին կը զոյնի եթէ ոչ՝ որդին հո-
գին:

Շահէն
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԿԱՆԱՆԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
V
Դեկտեմբերի 15-ին վերջացան սեկցիա-
նեի դադարեցնելները և կայացաւ վերջին
ընդհանուր ժողովը:
Կարգացվեցին 8 զեկուցումներ: Նախ խօ-
սեց ատ. Ինալիսովան Նիւթ ընտրելով
«Կենդ ինքնազիտակցութիւնը, որպէս հա-
սարակական կազմի վերանորոգութեան գոր-
ծոն»:

Սակայն այդ զեկուցումները «բնեւոր»
կազմում էր տ. Կայլմանովիչի զեկումը, որ
խօսում էր զանազան կուսակցութիւնների
վերաբերմունքի մասին դէպի կանանց հա-
րը: Չը հայտնով. որ ժամանակի սղութեան
պատճառով զեկուցանողը ստիպված է եղել
բաւականաւոր 15 րոպէով և այն էլ հարգել-
լով իր զեկուցման վերջին մասը, այնուա-
մեջանիստ տուել է ամփոփումներ ձևով
այնպիսի բազմազան ու կաթողիկէ դատա-
դութիւններ, որոնք տաք վիճաբանութիւն-
ների տեղի են տուել:

Ահաւասիկ մի քանիսը նրանցից.
«Իրեքերը կուսակցութիւնների միայն էս-
տեղիկայի համար են կանանց իրաւահա-
ւասարութիւնը պահանջում»:

«Մօրիս» — դեմօկրատները յանգել են
կանանց իրաւահասարակութեան կանանց
բուրժուազական շարժման ճնշման ներքոյ:
«Տղամարդկանց բուրժուազականութեան
հաւասար է բուրժուազիայի բուրժուազու-
թեան»:

...«Մասնէյիսի ս.դ. կոնֆերենցիայում
«առում էին», որ կանայք իմար են...
«որ մեր գաւառները ոչինչներով կը ծածկ-
վին, եթէ կանանց իրաւահասարակութիւն
տալու լինեն» և այլն:

Այդ զեկուցումից դժգոհ են մնացել մին-
չև իսկ կաթողիկէները: Իսկ «սոց.դեմո-
կրատներին» ուղղակի զայրացել են:
Ընդհանուր առմամբ անշուք տպաւո-
րութիւն է թողել այդ զեկուցումը:

Լ. Ե. Գուրկիչը զեկուցել է «եղբայրանե-

րի պահպանութեան մասին» նկատելով
զեկուցանների և բանտերների երեխաների
կենսաւր խնուր պատկերը:

Դասախօսը շեշտում է, որ «մայրութեան
պահպանումը» կանանց հարցի ամենաէա-
կան կողմերից մէկն է: Նրա ասածների
զիստարթ իմաստը այն է եղել, որ «ամուրի
տղամարդիկ ու կանայք ենթարկվեն տուր-
քի»: Ապա կարգացվեց տ. Կոյունայի ու-
շադրու զեկուցումը՝ «կին բանտերէն
արդի հասարակութեան մէջ», ուր նա մատ-
նանում էր, որ չը կայ անկախ կանանց
հարց. կանանց հարցը մտնում է մեր ժա-
մանակի ընդհանուր սոցիալական պրօբլեմի
մէջ, իբրև նրա անբաժանելի մասը, ուստի
և կնոջ լիակատար ազատագրութիւնը հնա-
րաւոր է միայն ընդհանուր սոցիալական
հարցի լուծման դէպքում, ժամանակակից
հասարակական կարգերը արմատականապէս
բարեփոխելով:

Ժողովին այնքան բազմութիւն է եղել
հաւաքված, որ մինչև իսկ համագումարի
անդամներից մի քանիսը չեն կարողացել
ներս մտնել:

Նոյն օրը երեկոյան կարգացվել են զե-
կուցումներ բոլոր սեկցիաներում:

Երկրորդ սեկցիայում տեղի է ունեցել մի
միջոցառ. Աղբարական հարցի մասին առա-
ջարկվել են երկու օրինագծեր, կազ-
մված Նոյնիների 9-ի օրէնքի ոգու համա-
ձայն. առաջին բանաձևը կարգալիս՝ պրիս-
տաւը չէ թողել կարգալու, իսկ երկրորդի
ժամանակ բոլորովին փակել է նիստը:

ՕՐԻՆԱԿԻՆԻ ԿՏԱԿ

Ես կը գերադասեի, որ բարեբարը իր
կենսի օրով իրագործէր այն, ինչ որ պէտք
է կտալով թողնէ անկու ուրիշներին:

Ոչինչ համեմատութիւն չէ կարող լինել
բարեբար անկու այն երկու պայմանների
միջև, որոնցից առաջինում բարեբարողը
պահպանում է ներկայ կենսից, իսկ երկ-
րորդում՝ ապագային՝ «Եր» տնկած ծառի
տակը քննել, իր մեծացումը պտղի ուտելը
անխաբիւր արժէք է (Պ. Արքեպիսկոպոս):

Սակայն, քանի դեռ ապրում ենք կտալ-
ների ժամանակում, չեմ կարող իմ հիա-
ցումը չը յայտնի այն սիրուն և նախան-
ձիւր կտակի առիթով, որ արել է նոր
հանգուցելով թիֆլիսից Գեորգ Զոհրա-
բանը («Մշակ» № 274):

Մեծ բան չէ նրա արած կտակը, բայց
բարձր է նշում: Ու քարձր է՝ նշում
երկու տեսակետով. առաջին կտակողը մի-
շակ է անուս վաճառական է, երկրորդը
կտակում է ունիւմ տարածելու նպատակով
70,000 րուբլ... մեր այս ամենակարօտ
ժամանակում, այն էլ՝ խաւար Պարսկաս-
տանին:

Այս հանգամանքներն այնքան բարձր են
խօսում իսկող վաճառականի օգտին, որ
ես խոնարհվում եմ նրա սուրբ մտորումնե-
րի, նրա իմաստուն որոշման առջև:

Է. Բ. Ն.

Մ օ ս կ մ

ՏԵՂԵԿՈՒԹԻՆԵՐՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

ԱՆԷՔԱՆ ԱՐՕՊՕՂ, 24 դեկտ.
«Աղբեր» ամսագիրն իր 25 տարին բո-
լորել է անցուցել է այդ պատմական ան-
ցանի, իր գոյութեան ընթացքում ճաշակել
է շատ չարիքներ ու բարիքներ, սակայն իր
նշանաբանն է դրել կրթել մեր մատակ
սերունդը, տալ մանկական յարմար գրե-
թեանքներ և սերունդը կրթել ու պատրաս-
տել. նա գործել է այդ երկար ու ձիգ տա-
րիներն անընդհատ և աչքի առաջ ունենա-
լով իր ապագայ բարոյական

Առաջին քուհարկութեան հետևանքն

Полицейская. 7.